

Հավելված
Հայաստանի Հանրապետություն
Շիրակի մարզի Արևիկ համայնքի
ավագանու 2016թ դեկտեմբերի 27-ի
թիվ 29 - Ն որոշման

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Շ Ի Ր Ա Կ Ի Մ Ա Ր Ձ Ի

Ա Ր Ե Վ Ի Կ Գ Յ ՈՒ Ղ Ա Կ Ա Ն Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի

2017-2021 Թ Վ Ա Կ Ա Ն Ն Ե Ր Ի

Զ Ա Ր Գ Ա Ց Մ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ինչ է Հնգամյա ծրագիրը.

1. Համայնքի իրավիճակի գնահատում:
2. Համայնքի ռազմավարություն և հիմնական նպատակներ:
3. Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում:
4. Ծրագրի ամփոփ տեղեկագիր:
5. Համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում:
6. Համայնքի զարգացման քառամյա ծրագրի հիմնական ցուցանիշներ:
7. Եզրափակում:

Հավելված 1. Համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածք:

Հավելված 2. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկ:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Արևիկ գյուղը հիմնադրվել է 1815-20թթ:

Գյուղի նախկին անվանումը եղել է Թափադուլակ: Բառը ունի թուրքական ծագում՝ Թափա նշանակում է բարձունք, դուլակ նշանակում է ոչխարների մակաղելու տեղ:

1805թ., երբ Շիրակը անցնում է Պարսկաստանից Ռուսաստանի տիրապետության տակ, թվով 12 ընտանիք արևմտյան Հայաստանի Կարնո նահանգի Մուշ, Բասեն, Ալաշկերտ գավառներից գաղթում են ավելի ապահով վայրեր, մասնավորապես Շիրակ:

Նրանք հիմնականում եղել են կաթուղի դավանանքի: 1832թ. Գյուղն ուներ 131 բնակիչ: 1843թ գյուղը ձեռնամուխ է լինում Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու շինարարությանը, որը տևում է գրեթե կես դար: Այս գործում մեծ ներդրում ունի արևիկցի բանասեր, հայագետ, թարգմանիչ Բարսեղ Սարգսյանը, որը եղել է Մխիթարյան միաբանության նպարանապետը: Գյուղի առաջին քահանան եղել է Տեր Բարսեղը, մինչև 1921թ-ը քաղաքացիական ակտրեի/ ծնունդ, ամուսնության և մահվան/ գրանցումները կատարվել են եկեղեցու ծխամատյանում: Դպրոցը նույնպես եղել է եկեղեցուն կից:

Գյուղը երկու անգամ ենթարկվել է թուրկական ներխուժման՝ 1918թ. և 1920., որի հետևանքով գերեվարվել և Թուրքիա են տարվել 250 տղամարդ, որից կենդանի են մնացել և ետ վերադարձել 5-6 մարդ:

Գյուղում 1928 թվականին իրականացվում է կոլեկտիվացումը, որի կազմակերպիչն էր Ռուբեն Հովսեփյանը: 1937թ. Կուլակաթափության անվան տակ Սիբիր է արքայություն 16 արևիկցի, որոնցից ետ են վերադարձել երկուսը:

Հայրենական Մեծ պատերազմին մասնակցել են 250 արևիկցի, որից զոհվել են 122-ը:

Գյուղի ապրուստի հիմնական միջոցներն են հողագործությունը, անասնապահությունը և արտագնա աշխատանքը: Արևիկցուն բնորոշ է աշխատասիրությունը: Հանրապետությունում առաջինը Արևիկ գյուղն է 1965թ.-ին արժանանում « Կոմունիստական աշխատանքի» հաղթողի կոչմանը:

1970-80թթ. Գյուղը գազաֆիկացվում է, գործում է հեռախոսակապը: Գյուղը այժմ էլ գազաֆիկացված է և կապույտ վառելիքը օգտագործում է տնտեսությունների 95%:

Բնակչության միջին և երիտասարդ տարիքի(16-60 տարեկան) մարդիկ օգտվում են բջջային հեռախոսակապից: Գրեթե գյուղի բոլոր բնակարաններում տեղադրված են հեռախոսներ:

Գյուղն ունի երկհարկանի տիպային դպրոց:

Գյուղում գործում են մանկապարտեզ /2 խումբ/,երաժշտական դպրոց, մշակույթի տուն,գրադարան, բուժ. կետ: Վերջին 3-4 տարիներին գյուղում նկատվում է լուրջ տեղաշարժ դրական առումով, իրականացվել են սոցիալ-տնտեսական նշանակության մի քանի ծրագրեր, որոնք զգալի ազդեցություն են թողել ազգաբնակչության կենսակերպի վրա:

Գյուղի աշխարհագրական դիրքը և կլիման:

Շիրակի մարզի Արևիկ գյուղն գտնվում է մարզկենտրոն Գյումրիից հարավ արևելք, ծովի մակերևույթից 1500մ բարձրության վրա: Մարզկենտրոնից հեռավորությունը 7կմ է:

Համայնքի վարչական տարածքը՝ 1567,1հա: Չմռան տևողությունը 6 ամիս է, եղանակը՝ խստաշունչ, ձմռան միջին ջերմաստիճանը 25°C: Գարնանը և աշնանը բնորոշ են քամիները տեղումների միջին քանակը 200-250մմ: Գյուղն ունի խմելու ջրի պաշար, որը խորքային պոմպերի միջոցով մատակարարվում է ազգաբնակչությանը:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ/Թ		2013	2014	2015	2016
Բնակչության թիվը		1803	1822	1837	1852
Տղամարդ		879	862	886	883
Կին		924	960	971	969
Կրթություն	Բարձրագույն	170	174	179	185
	Միջն. Մասնագիտական	136	141	145	150
	Միջնակարգ	943	938	932	942
	Ութամյա	129	134	140	150
	Տարրական	72	66	60	70
Նպաստառուների թիվը, քանակ		50	50	48	55
Տնտեսությունների թիվը		459	459	456	461
Ծնունդ		22	26	29	2
Մահ		16	21	13	4
Արտագնա աշխատողներ		245	240	226	200
Ժամանակավոր բացակայողներ		130	130	162	188
Ժամանակավոր բնակվողներ		85	88	78	58
Դպրոցական տարիքի /7-17/		198	182	175	173
Ծնողազուրկ երեխաներ		15	17	20	20
Աշխատունակներ		370	352	365	377
Թոշակառուներ		217	221	226	250
Հաշմանդամներ		22	24	27	30
Բնակարանի կարիքավորներ		-	-	-	-

ԻՆՉ Է ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ

Հնգամյա ծրագիրը իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ, որը նախատեսված է ռազմավարական քաղաքականությամբ, համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծմամբ և նպատակային բյուջետավորման գործընթացի իրականացմամբ:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱԿԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

2016 թվականի նոյեմբերի 14-ին համայնքի ղեկավարի պաշտոնակատար է նշանակվել Գագիկ Սերոբի Վանոյանը, ծնված 1982թ-ին, ունի բարձրագույն կրթություն: Նա կազմավորել է աշխատակազմ, որի աշխատակիցների հաստիքացուցակը, ինչպես նաև համայնք ավագանու կազմը ներկայացվում է ստորև:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՃԽԱՏԱԿԱԶՄԸ

Հ/Հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Պաշտոն	Ծննդ թիվ	Կրթութ յուն	Կուսակցո ւթյունը
1	Մելքոնյան Վարդկես Մելքոնի	համ.ղեկ. տեղակալ	1979	բարձր.	ՀՀԿ
2	Մելքոնյան Ստյոպա Գարեգինի	Գյուղապետարանի աշխ. քարտուղար	1963	բարձր.	անկուսակ
3	Սեխալեյան Արարատ Հովհաննեսի	Առաջատար մասնագետ	1984	բարձր.	ՀՀԿ
4	Վանոյան Գագիկ Սերոբի	1-ին կարգի մասնագետ	1982	բարձր.	ԲՀԿ
5	Առաքելյան Աստղիկ Սեդրակի	Համ. օպերատոր և գործավար	1982	բարձր.	անկուսակ
6	Մկրտչյան Մարո Անտոնի	Գրադարանավար	1960	բարձր.	ԲՀԿ
7	Նռանյան Թեհմինա Կառլենի	Ակումբավար	1986	բարձր.	անկուսակ
8	Կաթունյան Արմենուհի Ալբերտի	Հավաքարար	1956	միջնա կարգ	-

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱԶՄԸ

Հ/Հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Զբաղվածությունը	Ծննդ թիվ	Կրթությոն	Կուսակցությունը
1	Գաբրիելյան Կարինե Արտուշի	ուսուցիչ	1963	միջին մասն.	անկուսակ
2	Հովհաննիսյան Արմեն Հովհաննեսի	հողագործ	1980	միջին մասն.	անկուսակ
3	Մկրտչյան Սաղաթել Հովհաննեսի	էլեկտրիկ	1954	միջնակարգ	ՀՀԿ
4	Մքոյան Արամայիս Ռազմիկի	հողագործ	1979	միջին մասն.	ՀՀԿ
5	Նռանյան Հովհաննես Կառլենի	հողագործ	1988	միջնակարգ	ՀՀԿ
6	Վանոյան Անդրեյ Սերոբի		1991	միջին մասն.	անկուսակ
7	Ստեփանյան Վարդան Գարեգինի	-	1987	միջին մասն.	ՀՀԿ

ԿՈՄՈՒՆԻԿԱՑԻՈՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Արևիկ համայնքի ջրամատակարարումը ապահովվում է համայնքի ընդերքի ջրային պաշարներից՝ 3 խորքային պոմպերի միջոցով, անմիջապես միանալով ներտնտեսային ցանցին /առանց ավազանի/։ Ազգաբնակչությունը ջուրը օգտագործում է առանց քլորացման։

Միջին հաշվով համայնքը 1 օրվա ընթացքում ջրով ապահովված է 10-12 ժամ։ Կապված տարվա եղանակների հետ, ջրի օգտագործման ցուցանիշները փոխվում են։ Զրամատակարարման ցանցի մաշվածության պատճառով հաճախակի տեղի են ունենում վթարներ, որոնք վերացվում են համայնքի միջոցներով։ Համայնքի կոմունիկացիոն կառույցներն ունեն 40-50տարվա /այդ թվում նաև խմելու ջրի ցանցի խողովակները/ վաղեմություն և կարիք ունեն կապիտալ վերանորոգման։

Անհրաժեշտ է կատարել նաև փողոցների բարեկարգում, հեղեղատների, ոռոգման ջրի ցանցի մաքրում և բարեկարգում։

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքում կարևոր խնդիր է շրջակա միջավայրի պահպանումը։ Ազգաբնակչության կողմից կուտակվում է տնտեսական աղբը, որը աղտոտում է շրջակա միջավայրը՝ հատկապես գարնանը և աշնանը։ Այդ նպատակով աղբահանություն նախատեսվում է անցկացնել տարվա բոլոր եղանակներին։ Այդ նպատակով համայնքի տարբեր կողմերում փորվել են մեծ փոսեր, որտեղ լցվում է տնտեսական և շինարարական աղբը։ Աղբահանություն է կատարվում նաև Գյումրի-Արևիկ և Արևիկ-Այգաբաց ճանապարհների երկայնքով։ Համայնքի կենտրոնական մասում գյուղապետարանի շենքի և բուժկետի միջև ընկած տարածքում կատարվել է ծառատնկում կանաչ գոտի ստեղծելու նպատակով։ Կան չորացած ծառեր, որոնք նախատեսվում է ամեն գարնան փոխարինել նոր տնկիներով։ Նախատեսվում է նաև ծառատունկ կազմակերպել համայնքի այլ մասերում։ Համայնքի տարբեր մասերում՝ մասնավորապես կենտրոնում անցկացնել շաբաթօրյակներ՝ ազգաբնակչության և համայնքապետարանի աշխատակիցների մասնակցությամբ։

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում կա 440 առանձնատուն՝ 48961,16 քառ.մ. մակերեսով: Արտագաղթի պատճառով համայնքում կան լքված, չբնակեցված տներ: Երկրաչարժից հետո կառուցված տներից սեփականաշնորհվել են 15-ը:

Համայնքում կան կիսակառույց շինություններ, որոնց կառուցումը 2017թ-ին չի նախատեսվում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՈՂ

Համայնքի վարչական տարածքը՝	1580 հա
Վարելահողեր՝	938.1 հա
Արոտավայրեր՝	290,0 հա
Դաշտային ճանապարհներ՝	-
Արտադրական մաս՝	28.05 հա
Տնամերձ հողեր՝	119,34 հա
Ոռոգվող հողեր՝	679,3 հա
Գյուղամիջյան փողոցներ՝	55,84 հա
Սեփականաշնորհված հողեր՝	888,4 հա
Հուշարձանի տարածք՝	0,1 հա
Դպրոցի տարածք՝	1,78 հա
Գերեզմանոց՝	2,1 հա
Գյուղացիական տնտեսությունների թիվը՝	461
Սեփականաշնորհված մեկ հողաբաժնի չափը՝	1,1 հա

ԳՅՈՒՂԱՏՆՆԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում հիմնականում մշակում են հացահատիկային մշակաբույսեր: Գյուղացիական տնտեսությունները մշակում են նաև խոտ, կարտոֆիլ, բանջարեղեն:

Գյուղատնտեսությանը մեծ վնաս են հասցնում կարկտահարությունը, կրծողները և միջատները:

2014թվականին տեղադրվել են 2 հակակարկտային կայաններ համայնքի բյուջեի միջոցներով:

Գյուղատնտեսության արտադրության կազմակերպման մյուս ձևը անասնապահությունն է, որով զբաղվում է 168 տնտեսություն

Անասնազլխաքանակը 2016 թվ. կազմում է

- խոշոր եղջերավոր	765 գլուխ
- խոզեր	145 գլուխ
- թռչուններ	2747 թև

Համայնքում հողագործության և անասնապահության բնագավառում վերջին տարիներին գրեթե բնակչության եկամուտները չեն ավելանում:

Համայնքն ունի գյուղատնտեսական տեխնիկայի՝ գյուղագործիքների և մեքենաների որոշակի քանակություն, որը ժառանգված է կոլտնտեսությունից, հետևաբար շատ հին են և մաշված:

Նախատեսվում է դրանց օտարումը առաջիկայում:

(Համայնքի ավագանու Արձանագրություն N 12 որոշում թիվ 31):

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Համայնքն ունի տիպային, երկհարկանի միջնակարգ դպրոց /2001/, սակայն չունի մարզադահլիճ, որի կառուցումը նախատեսվում է առաջիկայում (հիմնային աշխատանքները կատարված են):

Դպրոցում սովորում են 173 աշակերտներ:

Դպրոցը համալրված է 26 մասնագետ մանկավարժներով: Կրթօջախը ապահովված է խմելու ջրով, կոյուղին գործում է, գազաֆիկացված է:

Համայնք ունի երկու խմբով մանկապարտեզ, որը գործում է /1989թ-ից/ տնակային պայմաններում:

Գյուղի կենտրոնում կառուցված է երկհարկանի, քարաշեն մանկապարտեզի շենքը, որը ունի հիմնանորոգման կարիք: Համայնքի ղեկավարության գերխնդիրն է մանկապարտեզի շենքի հիմնանորոգումը:

ՄՇԱԿՈՒՅԹ, ՄՊՈՐՏ

Գյուղի մշակույթի տան շենքը ունի կետարյա պատմություն: Շենքը գտնվում է անմխիթար վիճակում: Հատկապես վնասված է շենքի տանիքը: Հետևաբար չի գործում դահլիճը, որի տանիքը գրեթե փլուզված է: Շինությունը ենթակա է հիմնանորոգման:

Նույն շենքի երկրորդ հարկում գործում է գրադարանը՝ 9600կտոր գրքային ֆոնդով: Գրադարանը ունի վերանորոգման, կահավորման և գրականությամբ համալրման կարիք:

Համայնքի մարզական կյանքը ակտիվ չէ: Մշակույթի տան մի սենյակում գործում է խաղասենյակ սեղանային խաղերով:

Համայնքն ունի մարզադաշտ: Այն հարթեցված է, օգտագործվում է ֆուտբոլային խաղերի անցկացման համար:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

1989-թվից համայնքի բուժկետը տեղակայված է փայտյա տնակում: Բուժկետը ապահովված չէ ջրով, կոյուղով, չկան համապատասխան պայմաններ: Բուժկետն ունի 1 աշխատող: Ներդրվել է ընտանեկան բժշկի համակարգը: Բուժկետում ժամանակին անցկացվում են մանկահասակ երեխանների պարտադիր բուժ. միջոցառումներ: Բուժ. աշխատողի կողմից ամենօրյա հսկողության տակ են նորածին երեխանները:

Ախտորյանի պոլիկլինիկայի բժիշկների կողմից բուժկետում պարբերաբար կազմակերպվում են բնակչության համար ընդունելություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքն ունի զարգացման մեծ ներուժ, իր բնական և մարդկային ռեսուրսներով: Համայնքը զազաֆիկացված է, ապահովված ջրով:

Համայնքն ունի կաթոլիկ եկեղեցի, որը մշտապես ակտիվ է գործում է վերանորոգված է ու կահավորված: Համայնքի հողերի մեծ մասը ոռոգվող են, բնակլիմայական պայմանները բարենպաստ են:

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Գյուղամիջյան և դաշտամիջյան ճանապարհները անբարեկարգ են:

Խմելու ջրի ներքին ցանցի ջրագծերը քայքայված են:

Մանկապարտեզի անմխիթար վիճակը/գործում է տնակային պայմաններում/:

Մշակույթի տան անմխիթար վիճակը:

Մարզադահլիճի, կենցաղային սպասարկման որևէ ծառայության բացակայությունը:

Մեծ քանակությամբ աշխատանք փնտրողների առկայությունը:

Բուժկետի քարաշեն շենքի բացակայությունը:

Խմելու ջրի առանց քլորացման օգտագործումը:

Գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման արտադրամասերի բացակայությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Աշխատուժի առկայությունը
- Գյուղտեխնիկայի առկայությունը
- Բարձր բերքատվություն ապահովող գյուղատնտեսության նշանակության հողատեսքերի առկայությունը:

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ԿՏԱՆԳՆԵՐԸ

- Խմելու ջրագծերի անմխիթար վիճակը:
- Խմելու ջրի առանց քլորացման օգտագործումը:
- Ներհամայնքային ճանապարհների մի մասի անբարեկարգ վիճակը:
- Ոռոգման ցանցի անմխիթար վիճակը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Կոմունիկացիոն խնդիրներ

- Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում:
- Դաշտամիջյան որոշ ճանապարհների բարեկարգում:
- Հեղեղատների, ոռոգման ցանցի առուների մաքրում:
- Խմելու ջրի քլորացում:
- Ոռոգման ներտնտեսային ցանցի բարեկարգում:
- Կամուրջների վերանորոգում:

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ

- Մանկապարտեզի շենքի հիմնանորոգում:
- Մշակույթի տան հիմնանորոգում:
- Գյուղապետարանի շենքի տանիքի վերանորոգում:
Գյուղամիջյան ևս 2 ավտոբուսային կանգառների տեղադրում /2013թ տեղադրվել են 3 ավտոբուսային կանգառներ/:
- Կանաչ գոտիների հիմնում:
- Նոր գերեզմաններ տանող ճանապարհների բարեկարգում /2014թվ. հին գերեզմանները ցանկապատվել է/ ցանցապատում/:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

- Տեխնիկական մշակաբույսերի ցանքատարածությունների ավելացում:
- Գյուղատնտեսության զարգացման ինտենսիվ եղանակների խթանում:
- Գյուղտեխնիկայի և գյուղգործիքների օտարում:
- Պարարտանյութի ձեռք բերում բաշխման կազմակերպում:

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ՍՊՈՐՏ

- Հայաստանի Հանրապետության տոներին, հիշատակի օրերին նվիրված միջոցառումների անցկացում :
- Հոգևոր, եկեղեցական տոների և արարողությունների մասնակցություն, աջակցություն:
- Երաժշտական դպրոցի գույքավորում:
- Գրադարանի գրքային ունեցվածքի համալրում, ընթերցասրահի ստեղծում և կահավորում
- Մրցույթների /սպորտային/ կազմակերպում և անցկացում:
- Մարզագույքի / նաև ձմեռային/ ապահովում:

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

- Կենտրոնացված աղբահանության կազմակերպում:
- Ամենամյա ծառատնկում, կանաչ գոտու հիմնում:
- Հողերի և արոտների արդյունավետ ու նպատակային օգտագործում:

ԾՐԱԳԻՐ 1.

ՄԱՆԿԱԿԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԻ ՀԻՄՆԱՆՈՐՈՎՈՒՄ

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Ծրագրի իրականացումը նպատակ է հետապնդում՝

1. Մանկապարտեզը տնակներից տեղափոխել քարաշեն շինություն:
2. Ունենալ մանկապարտեզի շենք կոմունալ հարմարություններով, ջեռուցմամբ և բարեկազ տարածքով:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի նպատակն է ունենալ համապատասխան շենքային պայմաններ նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակության, բազմակողմանի զարգացման համար:

Ավելացներ մանկապարտեզ հաճախող երեխաների թիվը:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է՝

- Կազմել նախագծա-նախահաշվային փաստաթղթեր մինչև 01.05 2015թ
- Ապահովել համայնքային բյուջեով պահանջվող ներդրումը ծրագրի իրականացման համար:
- Մրցութային կարգով շինարարության իրականացում մինչև 01.10.2018թ
- Մանկապարտեզի շենքի գույքավորում մինչև 01.11.2018թ
- Ֆինանսական այլ աղբյուրների հայթայթում մինչև 01.10. 2018թ

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱԿՈՐՄԱՆ

ԱՂԲՅՈՒՐԸ

Ծրագրի ֆինանսական միջոցները գնահատվում են՝ 120-130մլն. դրամ:

Անհրաժեշտ է աշխատանք տանել ֆինանսական այլ աղբյուրներ փնտրելու

ուղղությամբ / բարերարներ Սոց. ներդրումների հիմնադրամ, հանգանակում և այլն/:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագրի իրականացման ժամկետ է նախատեսվում 2017-2021թթ:

ՍՊԱՍԿՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրականացմամբ համայնքում կգործի նախակրթական հիմնարկ, որի արդյունքում կավելանա երեխաների թիվը: Մանկապարտեզի ուսումնա – դաստիարակչական աշխատանքները կկազմակերպվեն ըստ պահանջի: Մանկապարտեզը կունենա բոլոր կոմունալ հարմարությունները, հրապարակ և սպասարկող տարածք:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՄ

Ծրագիրը իրականացվելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավարությամբ ու վերահսկողությամբ: Պատասխանատու՝ Գագիկ Վանոյան:

ԾՐԱԳԻՐ 2.

ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ՏԱՆԻՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Գյուղապետարանի շենքը դարձնել ներկայանալի և անվտանգ: Քանի որ 1988թ. երկրաշարժից շինությունը տուժել է 15%-ով, տանիքի թիթեղները կոտրված են: Տեղումների ժամանակ կաթում է առաստաղից:

1. Ապահովել համայնքի բյուջեի ներդրումը գյուղապետարանի տանիքի վերանորոգման համար մինչև 01.09.2016թ.:

ՍՊԱՍԿՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ունենալ ներկայանալի և անվտանգ գյուղապետարանի շենք:

ԾՐԱԳԻՐ 3.

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը:

Նախատեսվում է մշակույթի տան շենքի հիմնանորոգում: Քանի որ շենքը անցած դարի 50-ական թթ. կառույց է, ուստի այն ենթակա է հիմնանորոգման:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի նպատակն է շինությունը դարձնել բարեկարգ և օգտագործելի: Մշակույթի տունը ծառայեցնել իր նպատակին, կազմակերպել ազգաբնակչության ազատ ժամանց ու միջոցառումներ: Ունենալ գրադարան՝ ընթերցասրահով և գրապահոցով:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները՝

Խնդիր 1. Վերանորոգել շենքի տանիքը մինչև 01.10.2017թ

Խնդիր 2. Կատարել ներքին հարդարման աշխատանքներ մինչև 01.01.2018թ

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրը նախատեսվում է իրագործել առաջիկա չորս տարների ընթացքում: Ծրագրի իրականացման համար հարկավոր է գտնել բարերարներ և աջակիցներ:

ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրագործման արդյունքում մշակույթի տունը և գրադարանը լիարժեք կճանաչեն իրենց նպատակին:

ԾՐԱԳԻՐ 4.

ՆՈՐ ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՀԱՐԹԵՑՈՒՄ

Ծրագրի ՆԿԱՐԱԳԻՐՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Ծրագիրը նախատեսում է նոր գերեզմանների տանող ճանապարհը հարթեցնել, դարձնել բանուկ

ճանապարհ: Գերեզմանների տանող ճանապարհը դաշտամիջյան ճանապարհ է, հետևաբար՝ դժվարանցանելի: Գերեզմանների երկարությունը 300մ է:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի նպատակն է ունենալ բարեկարգ ճանապարհ որը կտանի դեպի գերեզմաններ:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ծրագիրը իրականացնել համայնքի ֆինանսական միջոցներով:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017թ. ընթացքում:

ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրագործմամբ ներկայիս անբարեկարգ ճանապարհը կդառնա բարեկարգ և անցանելի:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Ծրագիրը իրականացվելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավարությամբ ու վերահսկողությամբ:

Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավարի պաշտոնակատար Գագիկ Վանոյան:

ԾՐԱԳԻՐ 5.

ԳՅՈՒՂԱՄԻՋՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԵՐԿՈՒ ԿՈՂՄԵՐՈՒՄ ԿԱՆԳԱՌՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Ծրագիրը նախատեսում է գլխավոր ճանապարհի երկու կողմերում ևս երկու կանգառների տեղադրում:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի նպատակն է համայնքի ազգաբնակչության տրանսպորտային երթևեկության որակի բարձրացում: Տրանսպորտային միջոցներին սպասելիս տեղումներից, քամիներից, արևից պաշտպանվելը:

Ծրագիրը իրականացնելու համար անհրաժեշտ է՝

Խնդիր 1. Ունենալ նախագծա-նախահաշվային փաստաթղթերը:

Խնդիր 2. Կազմակերպել երկու կանգառների և նստարանների պատրաստումը:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017թ ընթացքում:

ՍՊԱՍԿՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ունենալ քաղաքակիրթ տրանսպորտային սպասարկման տարբերակ:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Ծրագիրը իրականացվելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավարությամբ ու վերահսկողությամբ:

Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավարի պաշտոնակատար Գագիկ Վանոյան:

ԾՐԱԳԻՐ 6.

ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄԱՔՐՈՒՄ« ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի նկարագրությունը.

Ծրագրով նախատեսվում է ամենօրյա ուշադրություն համայնքի շրջակայքի, հասարակական կենտրոնի ու ներհամայնքային փողոցների մաքրությանը: հատկապես գարնան ամիսներին կազմակերպել կենտրոնացված աղբահանություն:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի նպատակն է ունենալ.

Սանիտարական ապահով վիճակ:

Մաքուր փողոցներ:

Չաղտոտված շրջակա միջավայր:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է լուծել՝

Խնդիր 1. Հատկապես գարնան ամիսներին կազմակերպել կենտրոնացված աղբահանություն:

Խնդիր 2. Համայնքի փողոցներում տեղադրել աղբարկղեր:

Խնդիր 3. Աղբը տեղափոխել միայն հատուկ դրա համար հատկացված տարածք:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրը նախատեսվում է կատարել ամեն տարի /2017-2021թթ/

ՍՊԱՍԿՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի կատարմամբ կբարելավվի բնակավայրի ու շրջակա միջավայրի սանիտարական վիճակը, կբացառվեն տնտեսական աղբի կուտակումները բնակավայրի տարածքում:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՄ

Ծրագիրն իրականացվելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավարությամբ ու վերահսկմամբ: Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավարի տեղակալը:

ԾՐԱԳԻՐ 7.

ԾԱՌԱՏՆԿՈՒՄ

Ծրագրի նպատակը.

Ծրագրով նախատեսվում է դեկորատիվ ու մրգատու ծառերի տնկում կանաչ գոտիներում, դպրոցամերձ տարածքում, ճամփեզրերին:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի նպատակն է ավելացնել կանաչ գոտիների տարածքը:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է՝

Խնդիր 1. Համայնքի միջոցներով ձեռք բերել տարեկան 200 տնկիներ:

Խնդիր 2. Նախատեսել ծառատունկի գոտիները:

Խնդիր 3. Օգտագործել համայնքի աշխատուժը հասարակական աշխատանքի կարգով ,

նպատակ ունենալով մարդկանց մոտ բարձրացնելու պատասխանատվությունը:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրը իրագործվելու է 2017- 2021թ.թ. վաղ գարնանը կամ ուշ աշնանը:

ՍՊԱՍԿՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրականացմամբ կավելանան կանաչ գոտիների տարածքները:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՄ

Ծրագիրը իրականացվելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավարությամբ ու վերահսկողությամբ: Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավարի պաշտոնակատար Գագիկ Վանոյան

ԾՐԱԳԻՐ 8.

ԳՅՈՒՂԱՍԻՋՅԱՆ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

Ծրագրի նկարագրությունը ու հիմնավորումը

Համայնքի գլխավոր փողոցը գտնվում է անբարեկարգ վիճակում: Չնայած ամենամյա հարթեցմանը որոշ հատվածներ գրեթե անանցանելի են հատկապես զարման անձրևների և ձնհալքի ժամանակ:

Ծրագրով նախատեսվում է գլխավոր փողոցի խճապատում, փոսալցում, հարթեցում 9000մ քառ. տարածքով: Համայնքի երկրորդական փողոցների հարթեցում, խճալցում, ավազալցում:

Ծրագրի նպատակը

Ծրագրի նպատակն է նորոգել ու բարեկարգել համայնքի գլխավոր փողոցը, ունենալ երթևեկելի, նորոգված փողոց: Որի իրականացման համար անհրաժեշտ է լուծում տալ մի քանի խնդիրների:

Խնդիր 1 Կազմել նախագծա-նախահաշվային փաստաթղթեր:

Խնդիր 2. Ջրանցման տեղերում փորել և տեղադրել խողովակներ:

Խնդիր 3. Համայնքի գլխավոր ճանապարհը բարեկարգել 9000մ.քառ.տարածքով:

Խնդիր 4. Խճալցել ու ավազալցել որոշ երկրորդական փողոցներ:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ծրագրի համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները գնահատվում են 90մլն.դրամ:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017 - 2021թթ.

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Ծրագիրը իրականացվելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավարությամբ ու վերահսկողությամբ: Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավարի պաշտոնակատար Գագիկ Վանոյան:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ՍՊԱՍԿՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրականացման արդյունքում համայնքը կունենա բարեկարգ գլխավոր փողոց և խճապատված և հարթեցված երկրորդական փողոցներ:

ԾՐԱԳԻՐ 9.

ԽՄԵԼՈՒ ԶՐԱԳԾԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Ծրագիրը նախատեսում է վնասված, քայքայված խողովակների հիմնանորոգում: Ազգաբնակչությանը քլորացված խմելու ջրով ապահովում:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Ծրագիր նպատակն է հիմնանորոգել խմելու ջրի խողովակները: 50-60 տարիների ընթացքում քայքայված ու վնասված ջրատարների փոխարինումը նոր խողովակներով:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները գնահատվում են.

Ծրագրի իրականացման համար դիմել << Հայկական Կարիտաս>>-ին:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրը իրականացվելու է առաջիկա չորս տարիների ընթացքում:

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍԿՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ազգաբնակչությունը կունենա քլորացված, մաքուր խմելու ջուր: Քանի որ համայնքի ջրամատակարարումը ապահովվում է ընդերքի ջրային պաշարներից, ուստի այն օգտագործվում է առանց քլորացման: Գյուղը կապահովվի անխափան ու մաքուր խմելու ջրով: Կվերանան մշտապես տեղի ունեցող վթարները:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Ծրագիրը իրականացվելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավարությամբ ու հսկմամբ: Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավարի պաշտոնակատար Գագիկ Վանոյանը:

ԾՐԱԳԻՐ 10.

ՈՌՈԳՄԱՆ ԶՐԱԳԾԵՐԻ ԿԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

Ծրագրի նկարագրությունը.

Ծրագրով նախատեսվում է մնացած 2450 գծամետր երկարությամբ ոռոգման ներտնտեսային ցանցի կապիտալ վերանորոգում /2014թ վերանորոգվել է 750գծամետր/: Ոռոգման ցանցը հին ու է քայքայված:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Ծրագիրը նպատակ է հետապնդում ոռոգման ջրի կորուստների կրճատում, ջրի ռացիոնալ օգտագործում:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները՝

Խնդիր 1. Կազմել աշխատանքների կազմակերպման նախագծա-նախահաշվային փաստաթղթեր:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՂՔՅՈՒՐՆԵՐԸ

Ծրագիրն իրականացնելու և ֆինանսական միջոցներ ձեռք բերելու համար դիմել աջակիցների, բարերարների:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրը իրականացվելու է 2017 թվականին:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Ծրագիրը իրականացվելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավարությամբ ու հսկմամբ: Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավարի պաշտոնակատար Գագիկ Վանոյանը:

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրականացմամբ կբացառվեն մինչև 50% - հասնող ջրի կորուստները, ջուրը հանդամաս կհասնի ավելի արագ:

ԾՐԱԳԻՐ 11.

ԴՊՐՈՑԻ ՄԱՐԶԱԴԱՀԼԻՃԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Ծրագրի նկարագրությունը.

Միջնակարգ դպրոցի մարզադահլիճի հիմնային աշխատանքները կատարված են: Շարունակել մարզադահլիճի կառուցումը:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Ծրագրի իրականացման նպատակն է դպրոցականների ֆիզիկական դաստիարակության խնդիրները լավագույն ձևով կազմակերպելը և անցկացնելը: Սպորտի և առողջ ապրելակերպի զարգացումը:

Ծրագիրն իրագործելու նպատակով կան խնդիրներ.

Խնդիր 1. Կազմել նախագծա-նախահաշվային փաստաթղթեր:

Խնդիր 2. Շինարարության ավարտից հետո համապատասխան գույքավորում:

Հ/Հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի Ֆինանս. զնահատ. ըստ ժամկետ-ի /մլն.դր./	2016	2017	2018	Ընդ. որից համ. բյուջե	Ներգրվող միջոց	Մոդուլներ ընդամենը
-----	------------------	--	------	------	------	--------------------------------	----------------	-----------------------

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ծրագիրն իրականացնելու և ֆինանսական միջոցներ ձեռք բերելու համար դիմել աջակիցների, բարերարների

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017 թվականի ընթացքում:

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍԿՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Դպրոցը կունենա նորակառույց մարզադահլիճ՝ համապատասխան հարմարություններով և մարզագույքով: Այն կծառայի դպրոցականների ֆիզիկական դաստիարակության կազմակերպման խնդիրներին: Կզարգանա սպորտը, որը դրականորեն կանդրադառնա երեխաների առողջության վրա:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Ծրագիրը իրականացվելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավարությամբ ու հսկմամբ: Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավարը:

1	2	3	4	5	6	7	8	9
1	Մանկապարտեզի շենքի կապիտալ վերանորոգում	120-130						
2	Գյուղապետարանի շենքի տանիքի վերանորոգում							
3	Մշակույթի տան հիմնանորոգում							
4	Նոր գերեզմաններ տանող ճանապարհների հարթեցում							
5	Գյուղամիջյան ճանապարհի և երկու կանգառների տեղադրում							
6	Բնակավայրի մաքրում, սանիտարական վիճակի բարելավվում, աղբահանություն							
7	Ծառատնկում	0,25	0,25	0,25	0,25	1,0	0	1,0
8	Գյուղամիջյան փողոցների վերանորոգում			9,0				
9	Խմելու ջրագծի հիմնանորոգում							
10	Ոռոգման ջրագծերի վերանորոգում							
	Ընդամենը							

Արևիկ համայնքի գյուղատնտեսական ցուցանիշները

		2011	2012	2013	2014
1. Գյուղացիական տնտեսությունների թիվը		464	459	458	456
ա.	Անհատական տնտեսություններ	464	459	458	456
բ.	Կոլեկտիվ տնտեսություններ	-	-	-	-
գ.	Պետական տնտեսություններ	-	-	-	-
2. Գյուղ-ապրանքների հիմնական տեսաների արտադրությունը					

ա.	ցորեն ց.	9800	7490	14063	8313
բ.	գարի ց.	4770	3250	6837	3105
գ.	կարտոֆիլ ց.	33875	42900	43367	31746
դ.	կաղամբ ց.	1380	870	844	113,6
ե.	Բանջարաբուստ. կուլտուրաներ ց.	4189	4880	4093	5750

3.Ցանկատարածություններ հա.

ա.	հացահատիկ	548	557	570	611
բ.	կարտոֆիլ	140	172	163	136
գ.	բանջարաբուստային կուլտուրաներ	21,0	25	21,64	23,0
դ.	կաղամբ	4,6	3,7	2,64	2,99
ե.	առվույտ	95,9	69,6	49,8	83,8
զ.	կորնզան	16,4	12,3	12,3	14,5

Անասնազխաքանակ. հատ

ա.	խոշոր եղջերավոր անասուններ	853	877	868	809
	Այդ թվում կովեր	359	366	377	354
բ.	Մանր եղջերավոր անասուններ	140	163	36	-
գ.	խոզեր	330	257	286	265
դ.	թռչուններ	3100	3411	3310	2768

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ, ՄԵՔԵՆԱՆԵՐԻ, ԳՅՈՒՂՏԵԽՆԻԿԱՅԻ ՈՒԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Հ/Հ	Անվանումը, մակնիշը	քանակը	ֆիզիկական վիճակը	
			սարքին	անսարք
1.	Տրակտոր ԴՏ-75մ	3	2	1
2.	Ուտ - 606	1	-	1
3.	S-70ս	1	1	-

4.	ՄՏՁ -82	1	1	-
5.	ՅՈՒՄՁ -6լ	2	2	-
6.	Էքսկավատոր ՊԹՎ -1	1	1	-
7.	Կոնքայի Ե-281	1	1	-
8.	Ե- 302	1	-	1
9.	ՍԿ -5 << նիվա>>	3	3	-
10.	Կարտոֆիլ ցանող	1	1	-
11.	Հակավորող մեքենա ՊՍ -1.6	3	3	-
12.	Գուրթան ՊԼՆ -305	4	3	1
13.	Ա/ մեքենա ՈՒԱՁ - 469	1	-	1
14.	Պարարտանյութ ցրող	2	2	-
15.	Թույն սրսկիչ	1	-	1
16.	Կարտոֆիլի կուլտիվատոր	1	1	-
17.	Կուլտիվատոր ԿՈԳ – 3.5	2	1	1
18.	Հացահատիկի շարքացան	3	3	-
19.	Կցասայլակներ	4	4	-
20.	Գլանատակառներ	2	2	-
21.	Բուլդոզերի կովշ	1	1	-
22.	Ա/ մեքենա ՎԱՁ -21214	1	1	-
23.	Կարտոֆիլ քանդող	1	1	-
24.	Ճակնդեղի կուլտիվատոր	1	1	-
25.	Կորի քաշող գործիք	1	1	-

**ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՔԻ ՍՈՑԻԱԼ – ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ**

Հ/Հ	Ցուցանիշներ	չափի	2011	2012	2013	2014
-----	-------------	------	------	------	------	------

		միավ.	փաստ.	փաստ.	փաստ.	փաստ.
1	Համայնքի տարածքը	հա	1567,1	1567,1	1567,1	1567,1
2	Բնակչության թիվը	մարդ	1867	1875	1894	1837
3	Ծնունդ	մարդ	29	22	26	29
4	Մահացություն	մարդ	18	16	21	13
5	Աշխ.ռեսուրսները, այդ թվում Զբաղվածները ըստ տնտ. ճյուղերի	մարդ	-	-	-	-
6	Գործազրկության մակարդակը	%	-	-	-	-
7	Առևտրի և հասարակական սննդի օբյեկտների թիվը	հատ	3	3	2	3
8	Վարձակալության տրված հողեր	հա	44,82	44,82	44,82	44,82
9	Վարձակալած հողերի օգտագործման մակարդակը	%	100%	100%	100%	100%
10	Խմելու ջրագծերի ներհամայնքային ցանցի երկարությունը	կմ	55,3	55,3	55,3	55,3
11	Ներհամայնքային ոռոգման ցանցի երկարությունը	կմ	11,7	11,7	11,7	11,7
12	Ոռոգման համակարգի տակ ընկած հողեր	հա	679,3	679,3	679,3	679,3
13	Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ	24	24	24	24
14	Զբարեկարգված փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ	14	14	15	15
15	Մասնավոր բնակ. ֆոնդ	հազ.ք.մ	-	-	-	-
16	Բնակելի տան կարիքավոր Ընտանիքների թիվը	հատ	-	-	-	-
17	Մեկ շնչի ընկնող ջրի սպառումը լ.	լօր	100	100	100	100
18	Ջրի կորուստները ցանցում	%	15	15	15	15
19	Սովորողների թիվը հանրակրթ. դպրոցում	մարդ	235	220	204	173

20	Երեխաների թիվը մանկապարտեզում	մարդ	35	35	35	35
21	Սովորողների թիվը երաժշտ. դպրոցում	մարդ	28	27	25	24
22	Գյուղապետարանի և ենթակառուցվ.աշխատողների թիվը	մարդ	25	25	25	25

ԵԶՐԱՓՈՒԿՈՒՄ

Արևիկ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը հիմք է հանդիսանալու համայնքի տարեկան ծրագրերի, բյուջեների մշակաման և կատարման աշխատանքները կազմակերպելիս:

Ելնելով համայնքի սոցիալ տնտեսական զարգացման քառամյա ծրագրի ռազմավարությունից և ընդհանուր նպատակներից, շատ կարևոր է սեփական եկամուտների լրացուցիչ աղբյուրներ գտնելը, ֆինանսական միջոցների արդյունավետ հավաքագրման կազմակերպումն ու նպատակային օգտագործումը:

2017-2021թթ.համայնքային բյուջեները պետք է մշակել որպես զարգացման ծրագրային բյուջեներ,

որոնցով հնարավոր կլինի իրականացնել ինչպես ընթացիկ և հիմնական վերանորոգման աշխատանքները, այնպես էլ սոցիալ –տնտեսական զարգացման ծրագրեր:

Համայնքի զարգացման ծրագրեր կարելի է ներկայացնել ՀՀ կառավարություն, Շիրակի մարզպետարան, լրացուցիչ ներդրումներ հայթայթելու նպատակով: Նախատեսվում է փնտրել ինվեստիցիաների նոր աղբյուրներ, ներգրավել գործարարների սեթական միջոցները, տարբեր սոցիալական հիմնադրամների ներդրումները:

Համայնքի զարգացման քառամյա ծրագիրը համայնքի ռազմավարության առաջնահերթ ծրագրերի ընդգրկման ու ֆինանսական միջոցների ապահովման հնարավոր համադրմամբ ու իրագործելիության բարձր հավանականությամբ:

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒԻՔԻ
ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ**

Հ/Հ	Անվանումը	Միավորը	Ֆիզիկական վիճակը	Արժեքը	Ծանոթություն
1.	Գյուղապետարանի շենք	1	բավարար	-	Քարաշեն կառույց
2.	Մշակույթի տուն	1	հիմնանորոգման կարիք	-	Քարաշեն կառույց
3.	Մանկապարտեզի շենք	1	հիմնանորոգման կարիք	-	Քարաշեն կառույց
4.	Խմելու ջրագծեր		Մասնակի վերանորոգված	-	Վերանորոգման երթակա
5.	Ոռոգման փակ ջրագծեր	2680 գծ.մ			650 գ.ծ.մ. վերանորոգման ենթակա
6.	Ոռոգման բաց ջրագծեր				3200 գ.ծ.մ. վերանորոգման ենթակա
7.	Կամուրջներ	4	բավարար		
8.	Մարզադաշտ	1			Կառուցապատման, բարեկարգման ենթակա
9.	Ներհամայնքային ճանապարհներ	25կմ			14կմ. ենթակա վերանորոգման